ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունիսի 2024 թվականի №---Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՏՐԱՆՍԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի մայիսի 14-ի №01/16/1425-2024 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ իրեն սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Աբովյան ք. 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 6/2 հասցեում գտնվող հողամասի աճուրդային եղանակով օտարման գործարքի կնքմանը,

բ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39-Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան համայնք ք. 2-րդ արդյունաբերական թաղամաս թիվ 6/2 հասցեում գտնվող հողամասի աճուրդային եղանակով օտարման գործարքի կնքմանը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գործարքի կնքումը հավաստող՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթի (այդ թվում՝ պայմանագիր, արձանագրություն և այլն) պատճենը,
2) գործարքի առարկա հանդիսացող գույքի օտարումից հետո համապատասխան գումարը նվազեցվելու է սակագների վերանայման ժամանակ Ընկերության կողմից մատուցվող ծառայության սակագնի հաշվարկից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հունիս 2024թ.